



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
6 մայիսի 2021թ.

ԲԴԽ-20-Ո-Կ-08

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՏՎՎՈՒԾԻ ՄԱՐԶԻ ԱՈՍՁԻՆ ԱՏՅԱԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ ՈՍՏԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՅԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՅԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*Ճախագահությունը՝
Բարձրագույն դատական խորհրդի
Ճախագահի պաշտոնակատար*

Գ. Զհանգիրյանի,

*մասնակցությունը՝
անդամներ*

- Գ. Բերմեդյանի,
- Դ. Խաչատրյանի,
- Լ. Մելիքջանյանի,
- Ս. Միրայելյանի,
- Վ. Մխիթարյանի,
- Վ. Քոչարյանի,

Վրդարադատության նախարար

Ռ. Բադասյանի,

*Վրդարադատության նախարարի
ներկայացուցիչ*

Պ. Մկրտչյանի,

*Տավուշի մարզի առաջին ասյանի
ընդհանուր իրավասության դատարանի
դատավոր*

Ռ. Մելքոնյանի,

դռնբաց նիստում, բնության առնելով Արդարադատության նախարարի պաշտոնակատար Քրիստինե Գրիգորյանի «ՀՀ Տավուշի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2021 թվականի մարտի 11-ի N18-Վ որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը,

Պ Ա Բ Ձ Ե Ց .

1. Գործի նախապատմությունը.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Գլխավոր դատախազի պաշտոնակատար Ս. Աֆանդյանի կողմից Արդարադատության նախարարին 23.10.2020 թվականին ներկայացված հաղորդումը թիվ ՏԳ/0003/11/20 դատական գործով Տավուշի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետև` նաև Դատարան) դատավոր Ռաֆիկ Մելքոնյանի (այսուհետև` նաև Դատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Նախարարի 11.01.2021 թվականի N4-Վ որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 11.03.2021 թվականի N18-Վ որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ` Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2.Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Նախարարը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև` նաև Օրենսգրք) 358-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 137-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, 151-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի (այսուհետև` նաև «Օրենք») 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Սահմանադրական դատարանի և Վեոաբեկ դատարանի մի շարք որոշումներ, նշել է, որ թիվ ՏԳ/0003/11/20 դատական գործով Դատավորը 03.07.2020 թվականին կայացրած որոշմամբ (այսուհետև` Որոշում) խախտել է դատական ակտի հիմնավորված և պատճառաբանված լինելու պահանջը, մասնավորապես, Դատարանը ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին Քննիչի որոշման դեմ ներկայացված բողոքի բնությունն իրականացրել և բողոքը բավարարել է` առաջնորդվելով ոչ կիրառելի Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված իրավական կառուցակարգով:

Գործի փաստերի համաձայն` մեղադրյալ Արծրուն Սլյանի (այսուհետև` նաև Մեղադրյալ) նկատմամբ 24.08.2019 թվականին որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին: Միևնույն ժամանակ, 15.05.2020 թվականի որոշմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացվել է, բանի որ Մեղադրյալը խախտել է դրա պայմանները: Մեղադրյալի նկատմամբ 15.05.2020 թվականին հետախուզում

հայտարարվելու արդյունքում, վերջինս 16.05.2020 թվականին ժամը 05:30-ին հայտնաբերվել ու բերման է ենթարկվել ոստիկանության Դիլիջանի բաժին:

Դատարանի 15.05.2020 թվականի որոշմամբ Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որից հետո Դատարանի 18.05.2020 թվականի որոշմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է:

Մեղադրյալի պաշտպանների կողմից 20.05.2020 թվականին վարույթն իրականացնող մարմնին միջնորդություն է ներկայացվել ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և նրա նկատմամբ գրավը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ (առաջարկվել է որպես գրավ ընդունել 1.000.000 ՀՀ դրամ գումարը), որը ՀՀ ՔԿ ՏՄԿ ՀԿԳ քննիչ Ս. Սադաթեյյանի 25.05.2020թ. որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու հիմքով:

Մյուս կողմից, Մեղադրյալի պաշտպանի կողմից 16.06.2020թ. վարույթն իրականացնող մարմնին ներկայացված միջնորդությունը՝ խափանման միջոց կալանավորումը վերացնելու և գրավը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ (առաջարկվել է որպես գրավ ընդունել 2.000.000 ՀՀ դրամ գումարը), ՀՀ ՔԿ ՏՄԿ Դիլիջանի ավագ քննիչ Հ. Վարդանյանի 21.06.2020թ. որոշմամբ կրկին մերժվել է: Քննիչի որոշման դեմ ներկայացված բողոքով Մեղադրյալի պաշտպանը Դատարանից խնդրել է 21.06.2020թ. որոշումը վերացնել, պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել Մեղադրյալի իրավունքների խախտումը, գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի, որպես խափանման միջոց կիրառել գրավը և որպես գրավ ընդունել 2.000.000 ՀՀ դրամը:

Քննիչի որոշման դեմ դատական կարգով Մեղադրյալի պաշտպանի կողմից 24.06.2020թ. բերված բողոքը քննելու արդյունքում 03.07.2020թ. Դատարանը, ղեկավարվելով Օրենսգրքի 290-րդ հոդվածով, որոշում է կայացրել բողոքը բավարարելու մասին և վարույթն իրականացնող մարմնի համար պարտականություն սահմանել Մեղադրյալի իրավունքների խախտումը վերացնելու մասին: Մասնավորապես, Դատարանի որոշման վերաբերելի մասում նշվել է. *«Քննության առնելով բողոքը, լսելով պաշտպանների հիմնավորումները՝ դատարանը զսնում է, որ (...) 2020 թվականի հունիսի 21-ի որոշմամբ խախտվել է մեղադրյալ Վրժրուն Սլյանի ֆիզիկական ազատության, արդար դատաբանության հիմնարար իրավունքները: Դատարանի այս հետևությունը բխում է գործի փաստական հանգամանքներից, մասնավորապես նկատելի է, որ գործով առկա են երեք մեղադրյալներ, որոնցից մեկը զսնվում է հետախուզման մեջ, մյուսը, ով հանդիսացել է կատարող, զսնվում է ազատության մեջ, իսկ սույն մեղադրյալը, որն ի սկզբանե մասնակիորեն սվել է խոստովանական ցուցմունքներ, պատշաճ ներկայացել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձին և որևէ փորձ չի կատարել գործի քննությանը խոչընդոտելու ուղղությամբ, անհիմն զսնվում է արգելանքի տակ:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ դատարանը որոշեց. Բողոքը ճանաչել հիմնավորված: Պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել թիվ 36100819 քրեական գործով մեղադրյալ Վրժրուն Սլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին 2020 թվականի հունիսի 6-ի որոշմամբ Վրժրուն Սլյանի իրավունքների խախտումը:»:

Նախարարը միջնորդությամբ նշել է, որ Դատարանը Մեղադրյալի Ոֆիզիկական ազատությանը (խոսքը գնում է Դատավորի կողմից նկատույնացվող՝ Սահմանադրությանն 27-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված՝ անձնական ազատության իրավունքի մասին), արդար դատաբանության իրավունքների խախտումը պայմանավորել է գործով մեղադրյալներից մեկի՝ հետախուզման մեջ զսնվելու, մյուսի՝ կատարողի՝ ազատության մեջ զսնվելու հանգամանքով, միաժամանակ արձանագրելով, որ ի սկզբանե մասնակիորեն խոստովանական ցուցմունքներ սկսած Մեղադրյալը, ով պատշաճ ներկայացել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձին և որևէ փորձ չի կատարել գործի բնույթը խոչընդոսելու ուղղությամբ, անհիմն զսնվում է արգելանքի տակ: Վերոնշյալ իրավական նորմերի և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումների համատեքստում պետք է նշել, որ Դատարանը կրել է պարտականություն պատճառաբանելու, թե ինչ փաստական սվյալների զննահամար արդյունքում է ձևավորվել իր եզրահանգումն առ այն, որ Մեղադրյալն անհիմն է զսնվում արգելանքի տակ, խախտել են Մեղադրյալի Ոֆիզիկական ազատությանը, արդար դատաբանության հիմնարար իրավունքները և ըստ այդմ,՝ առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտման վերացումը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու անհրաժեշտություն: Այնուամենայնիվ, Դատարանի բնարկվող որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դատարանի վերոնշյալ հետևությունը գուրկ է փաստական հիմքերից:

Բացի այդ, Որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ Մեղադրյալն ի սկզբանե մասնակիորեն սվել է խոստովանական ցուցմունքներ, մինչդեռ նախաբնության սկզբնական փուլում Մեղադրյալը սվել է խոստովանական ցուցմունքներ, սակայն հետագայում հրաժարվել է իր ցուցմունքներից, իսկ հետագա հարցաբնության ընթացքում պատճառաբանել է, որ նախկինում սված ցուցմունքները հորինել է: Նշվածն ըստ էության հաստատել է նաև Դատավորն իր բացատրությամբ՝ պատճառաբանելով, որ մեկ անգամ խոստովանական ցուցմունք տալը հիմք է տալիս այդ մասին հաստատագրել, բոլորովին պարտադիր չէ հետագայում անընդմեջ խոստովանական ցուցմունք տալ:

Դատական ակտում որևէ անդրադարձ չի կատարվել՝ ինչպես է դրսևորվել խախտումը, ներկայացված միջնորդությունը բնույթն առնելիս ինչ որոշում պետք է կայացնել բնույթը, որը չի կայացրել, մինչդեռ, Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված դատավարական ընթացակարգը, որով ներկայացվել է և Դատավորի կողմից բնույթն է բողոքը, ենթադրում է բողոքի բնարկման արդյունքում Դատարանի կողմից նշված հոդվածի իմաստով **որոշակի խախտման արձանագրում**՝ այնուհետև սահմանելով վարույթ իրականացնող մարմնի որոշակի պարտականություն:

Միաժամանակ, դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերը բովանդակային առումով հակասում են միմյանց, չեն բխում մեկը մյուսից: Մասնավորապես Որոշման **պատճառաբանական մասում** Դատարանը հանգել է հետևության, որ Մեղադրյալի՝ արգելանքի տակ զսնվելը հիմնավորված չէ, միևնույն ժամանակ, Որոշման **եզրափակիչ մասում** սահմանված է վարույթն իրականացնող մարմնի՝ Դատարանի կողմից արձանագրված խախտումը վերացնելու պարտավորությունը, որը միանշանակ չի ենթադրում Մեղադրյալի

նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջոցով նրա իրավունքների և օրինական շահերի խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմինն ներկայացվող պահանջ:

Արդյունքում, Դատավորի կողմից թույլ է տրվել դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի՝ ՀՀ թրեական դատարանության օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված նորմերի խախտում:

Դիմողը նշել է, որ Դատարանի կողմից ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին թնկալի որոշման դեմ ներկայացված բողոքի թմուցումը Դատավորի կողմից իրականացվել և բողոքը բավարարվել է՝ առաջնորդվելով ոչ կիրառելի ՀՀ թրեական դատարանության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված իրավական կառուցակարգով:

Դիմողը նշել է նաև, որ Մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացված բողոքի շրջանակներում ըստ էության խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու հիմքի առկայության հարցը վիճարկման առարկա դարձվելու պայմաններում (անկախ այն հանգամանքից, որ Մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացված բողոքի իրավական հիմքում դրվել են 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի կարգավորումները), բողոքը Դատավորի կողմից չէր կարող թմուցում առնվել Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կառուցակարգով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հարցը թմուցումն ենթակա է թրեադատարանական մեկ այլ կառուցակարգով, որը ենթադրում է ոչ թե նախաթմուցման մարմնի կողմից կայացված որոշման օրինականության բողոքարկում դատական կարգով, այլ համապատասխան միջնորդության ներկայացում դատարան՝ կալանավորման ձևով դատարանի կողմից ընտրված խափանման միջոցն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու հարցի թմուցումն համար:

Դիմողը եզրակացրել է, որ թիվ ՏԳ/0003/11/20 դատական գործով Դատավորը 03.07.2020 թվականին կայացրած որոշմամբ խախտել է դատական ակտի հիմնավորված և պատճառաբանված լինելու պահանջը, ինչպես նաև ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին թնկալի որոշման դեմ ներկայացված բողոքի թմուցումն իրականացրել և բողոքը բավարարել է՝ առաջնորդվելով ոչ կիրառելի՝ Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված իրավական կառուցակարգով, ինչն իր հերթին հանգեցրել է նաև Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ դատավորի կողմից դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկասկածի և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու վերաբերյալ վարքագծի կանոնի խախտման:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ .

Սույն կարգապահական վարույթի շրջանակում Դատավորը Նախարարին ներկայացրած բացատրությամբ և Բարձրագույն դատական խորհրդին ներկայացրած նույնաբովանդակ պատասխանով հայտնել է, որ 03.07.2020 թվականին Դատարանը թմուցումն է առել ՀՀ թմուցական կոմիտեի Տավուշի մարզային թմուցական վարչության Դիլիջանի բաժնի ավագ թմուցիչ Հ. Վարդանյանի թիվ 36100819 թրեական գործով մեղադրյալ Վրժրուն Սլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և

խափանման միջոց գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին 21.06.2020թ. որոշման դեմ պաշտպան Ս. Ոսկանյանի բողոքը և որոշել է բողոքը ճանաչել հիմնավորված և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու նշված որոշմամբ Վրծրուն Սլյանի իրավունքների խախտումը: 06.07.2020 թվականին բննչական բաժնի պետի կից գրությանը դասարանի այդ որոշման օրինակն ուղարկվել է դասավարական հսկողություն իրականացրած դասախազին: Վերջինս նույն օրը՝ 06.07.2020 թվականին, կայացրել է որոշում՝ թիվ 36100819 քրեական գործով բննիչի 21.06.2020 թվականի որոշումը վերացնելու մասին և միաժամանակ, ըստ էության բննության առնելով կալանավորումը վերացնելու և խափանման միջոց գրավ կիրառելու միջնորդությունը, կայացրել է համապատասխան որոշում: Փաստորեն, Դասարանի հիշյալ որոշումը ծառայել է իր նպատակային նշանակությանը և հիմք է հանդիսացել մի կողմից՝ բննիչի անօրինական որոշումը վերացնելու ու մեղադրյալի խախտված իրավունքները վերականգնելու, մյուս կողմից հսկող դասախազի լիազորությունների անխափան իրականացման համար, ինչը չի կարող չնպաստել ինչպես դասավորի, այնպես էլ՝ դասական իշխանության հեղինակության բարձրացմանը:

Դասավորը նշել է նաև, որ Վերաբննիչ քրեական դասարանը 14.09.2020 թվականին որոշել է Տավուշի մարզի դասախազի տեղակալ Ա. Մարգարյանի վերաբննիչ բողոքը բավարարել, Դասարանի 03.07.2020 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ այն պատճառաբանությամբ, որ առաջին ասյանի ընդհանուր իրավասության դասարանը բերված բողոքի բննության արդյունքում կիրառել է ոչ թե դրա համար նախատեսված հասուկ իրավական կառուցակարգը, այլ Օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը, և որ Օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադասավարական օրենքի էական խախտումներ են դասական բննության ժամանակ Օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերաբննիչ դասարանն արձանագրել է, որ առաջին ասյանի դասարանը, սույն գործով դասական ակտ կայացնելիս, թույլ է տվել դասական սխալ՝ դասավարական իրավունքների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են ճիշտ որոշում կայացնելու վրա, և Օրենսգրքի 380.1, 394-րդ և 398-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են առաջին ասյանի դասական ակտը բեկանելու համար:

Դասավորը նշել է, որ Օրենսգրքի 290-րդ հոդվածում սահմանված ընդհանուր բնույթի իրավական նորմի փոխարեն Դասարանը պետք է կիրառեր Օրենսգրքի 18-րդ գլխում ամփոփված համապատասխան հասուկ իրավանորմերը, ապա զսնում է, որ բննիչի որոշումը վերացնելու, մեղադրյալի խախտված իրավունքների վերականգնմանը պարտավորեցնելու պահանջ բովանդակող բողոքն օբյեկտիվորեն չի կարող բննության առնվել ու լուծվել այն իրավանորմերի կիրառմամբ, որոնք վերաբերում են խափանման միջոց կալանքը վերացնելու ու գրավ կիրառելու միջնորդությանը: Իսկ դասավարական իրավունքի խախտման մասին փաստարկները չունեն իրավական

որոշակիություն, հեճուխար, այս կապակցությամբ չի կարող պատասխան
սալ:

**4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն
ունեցող հանգամանքները.**

1. Դասարանի (դասավոր՝ Ռ.Մելքոնյան) 15.05.2020 թվականի որոշմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացվել է՝ Մեղադրյալի կողմից խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով և բավարարվել Դասարան ներկայացված՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը:

2. Մեղադրյալի նկատմամբ 15.05.2020 թվականին հայտարարվել է հետխուզում: Մեղադրյալը 16.05.2020 թվականին ժամը 05:30-ին հայտնաբերվել ու բերման է ենթարկվել ոստիկանության Դիլիջանի բաժին:

3. 18.05.2020 թվականին միջնորդություն է ներկայացվել Դասարան՝ Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը երկու ամիս ժամկետով վերահաստատելու վերաբերյալ, որը բավարարվել է (դասավոր՝ Ռ. Մելքոնյան):

4. Մեղադրյալի պաշտպանների կողմից 20.05.2020 թվականին վարույթն իրականացնող մարմնին միջնորդություն է ներկայացվել ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու և նրա նկատմամբ գրավը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝ առաջարկելով որպես գրավ ընդունել 1.000.000 ՀՀ դրամ գումարը: ՀՀ ՔԿ ՏՄՎ ՀԿԳ թնճիչ Ս. Սադախյանի 25.05.2020թ. որոշմամբ միջնորդությունն ամբողջությամբ մերժվել է՝ անհիմն լինելու հիմքով:

5. Մեղադրյալի պաշտպանի կողմից 16.06.2020 թվականին միջնորդություն է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին խափանման միջոց կալանավորումը վերացնելու և գրավը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝ առաջարկելով որպես գրավ ընդունել 2.000.000 ՀՀ դր. գումարը: ՀՀ ՔԿ ՏՄՎ Դիլիջանի ակազ թնճիչ Հ. Վարդանյանի 21.06.2020 թվականի որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

6. Մեղադրյալի պաշտպանի կողմից թնճիչի 21.06.2020թ. կայացված որոշումը բողոքարկվել է Դասարան: Ըստ ներկայացված բողոքի. «(...) Ապառված չեն Մեղադրյալի պատճառ վարձագիծը քրեադատավարական ներգործության այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորությունները, ի սկզբանե մեղադրանք առաջադրելուց հետո մինչև կալանավորվելը Մեղադրյալը դրսևորել է պատճառ վարձագիծ, հեճուխար, նրա պատճառ վարձագծի հետագա ապահովմանը կարելի է հասնել նաև այլ խափանման միջոց, սվյալ դեպքում՝ գրավ կիրառելու միջոցով: Մեղադրյալը շուրջ 10 ամիս քննվող քրեական գործով յուրաքանչյուր անգամ վարույթն իրականացնող մարմնի կանչով պատճառ ներկայացել է նախաքննական մարմնին և այդ ընթացքում որևէ կերպ չի խոչընդոտել նախաքննության կատարմանը, իրեն առաջադրված մեղադրանքի շուրջ ի սկզբանե սվել է խոստովանական ցուցմունք, իսկ ավելի ուշ՝ նոր մեղադրանք առաջադրելու ժամանակ, օգսվելով իր դատավարական իրավունքներից՝ մեղքի վերաբերյալ դիրքորոշում չի հայտնել և հրաժարվել է ցուցմունք սալուց: Քննիչը ներկայացված միջնորդությունը պատճառ թնճարկման առարկա չի դարձրել, այն մերժել է ապագային վերաբերող ենթադրական և վերացական հանգամանքներ նշելով, որ Մեղադրյալը մնալով ազատության մեջ, կթափանկի վարույթն իրականացնող մարմնից, կխոչընդոտի մինչև դատական վարույթում կամ դատարանում գործի թնճությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող

անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, միջնորդությունը չի համադրել առկա փաստական հանգամանքների հետ, ցուցաբերել է կողմնակալ վերաբերմունք, հաշվի չի առել Մեղադրյալի մոտ ի հայտ եկած հիվանդությունները, այն, որ առաջին անգամ ներկայացված միջնորդության մերժումից հետո գրավի առարկա գումարի չափը կրկնակի է առաջարկվել»։ Բողոքի հիմքում դրվել են ՀՀ բրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի կարգավորումները։

7. Բողոքի բնույթյան արդյունքում 03.07.2020 թվականին Դատարանը, ղեկավարվելով ՀՀ բրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, որոշում է կայացրել բողոքը բավարարելու մասին և վարույթն իրականացնող մարմնի համար պարտականություն սահմանել Մեղադրյալի իրավունքների խախտումը վերացնելու մասին։ Մասնավորապես Դատարանի որոշման մեջ նշվել է. «Քննության առնելով բողոքը, լսելով պաշտպանների հիմնավորումները՝ դատարանը զսնում է, որ Տավուշի մարզային բնակչական վարչության Գիլիջանի բաժնի ավագ քննիչ Հ.Վարդանյանի՝ թիվ 36100819 բրեական գործով մեղադրյալ Արծրուն Սլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին 21.06.2020 թ. որոշմամբ խախտվել է մեղադրյալ Արծրուն Սլյանի ֆիզիկական ազատության, արդար դատաբնույթյան հիմնարար իրավունքները։ Դատարանի այս հետևությունը բխում է գործի փաստական հանգամանքներից, մասնավորապես նկատարումներով, որ գործով առկա են երեք մեղադրյալներ, որոնցից մեկը զսնվում է հետախուզման մեջ, մյուսը, ով հանդիսացել է կատարող, զսնվում է ազատության մեջ, իսկ սույն մեղադրյալը, որն ի սկզբանե մասնակիորեն սվել է խոստովանական ցուցմունքներ, պաշտան ներկայացել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձին և որևէ փորձ չի կատարել գործի բնույթյանը խոչընդոտելու ուղղությամբ, անհիմն զսնվում է արգելանքի տակ։

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ բրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ դատարանը որոշեց. Բողոքը ճանաչել հիմնավորված։ Պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել թիվ 36100819 բրեական գործով մեղադրյալ Արծրուն Սլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին 2020 թվականի հունիսի 6-ի որոշմամբ Արծրուն Սլյանի իրավունքների խախտումը։»։

5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Նախարարի հաղորդումը, ինչպես նաև Նախարարի և նրա ներկայացուցչի բացատրությունները, Դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի

նորմի խախտումը, որը կասարվել է դիտարկությանը կամ կոպիտ անվտանգությանը: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է դիտարկությանը կասարված, եթե դատարանը գիտակցել է իր վարձագծի ոչ իրավաչափ բնույթը, իսկ 5-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անվտանգությանը կասարված, եթե դատարանը չի գիտակցել իր վարձագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև սվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Դատարանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդն էական է համարում հետևյալ հարցադրումները.

1. արդյո՞ք Դատարանի օրենքով վերապահված էր *Միտանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը թնկության առնելու մասին» որոշում կայացնելու իրավասություն,*

2. արդյո՞ք թիվ ՏԳ/0003/11/20 դատական գործի թնկության շրջանակներում *Միտանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը թնկության առնելու մասին» որոշման կայացմամբ Դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի խախտում,*

3. արդյո՞ք Դատարանի կողմից թույլ տրված դատավարական նորմի խախտումը կասարվել է դիտարկությանը կամ կոպիտ անվտանգությանը:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, իր ելակետային բովանդակությամբ բացահայտում է ինչպես իշխանությունների սարանջատվածության և հավասարակշռման սկզբունքի, այնպես էլ իշխանության թևերի՝ փոխադարձ հավասարակշռման արդյունքում ձևավորվող իրավասության թույլատրելի շրջանակները:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունների իրացման շրջանակը՝ բացառելու համար իշխանության չարաշահումը կամ իշխանագանգությունը իշխանության որևէ ճյուղի ներկայացուցիչների կողմից:

Մասնավորապես նշված հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կասարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործելու սահմանադրական պահանջն առանցքային նշանակություն ունի սահմանադրական օրինականության ապահովման խնդրում, առանց որի անհնարին է ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության բնականոն զարգացումը:

Օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակիցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան

դասախազին, դասախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դասախազին, դասարանինը՝ վերադաս դասարան: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական հետապնդման մարմնի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դասարան:

Դասարանի 03.07.2020թ. որոշման կայացման պահի խմբագրությամբ գործող ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ կալանավորման ձևով դասարանի ընտրած խափանման միջոցը կարող է փոփոխել և վերացնել դասարանը, իսկ քրեական գործով մինչդասական վարույթում՝ նաև դասախազը:

Վերոնշյալ քրեադատական դրույթի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն դատարանության մասնակիցներից իրավունք է վերապահում Օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները: Եզված հոդվածը սահմանում է բողոքարկման հետևյալ կարգը՝

ա) **քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները՝ համապատասխան դասախազին,**

բ) դասախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դասախազին,

գ) դասարանինը՝ վերադաս դասարան:

Միաժամանակ օրենսդիրն ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխելու լիազորություն սահմանել է միայն **դասախազի և դասարանի համար:**

Վարույթի նյութերի համաձայն, Մեղադրյալի պաշտպանի կողմից քննիչի 21.06.2020 թվականի որոշումը բողոքարկվել է Դասարան, որի արդյունքում 03.07.2020 թվականին Դասարանը, ղեկավարվելով Օրենսգրքի 290-րդ հոդվածով, որոշում է կայացրել բողոքը բավարարելու մասին և վարույթն իրականացնող մարմնի համար պարտականություն է սահմանել Մեղադրյալի իրավունքների խախտումը վերացնելու մասին:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասության բացակայության պայմաններում քննիչի որոշման դեմ ներկայացված բողոքը չէր կարող Դասարանում քննության առարկա դարձվել բողոքի հիմքում նշված իրավական նորմով, քանի որ սվյալ դեպքում քննիչը ՀՀ քրեադատական օրենսդրությամբ խափանման միջոց կալանավորումը վերացնելու լիազորություն չունենալու պայմաններում, ըստ էության, քննարկել ու որոշում է կայացրել խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին:

Օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դասարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դասախազի և օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դասախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դասարան կարող են ներկայացվել կասկածյալի,

մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և **եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:**

Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԳՈ-930 որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասում] (...) «...սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով» ձևակերպումից բխում է, որ մինչդասական վարույթում քրեական հետապնդում իրականացնող մարմինների ոչ բոլոր որոշումները կարող են անմիջականորեն բողոքարկվել դատարան: Դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկը, ի թիվս այլնի, սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքով նախատեսված դեպքերում» ձևակերպումը նշանակում է, որ օրենսգրքով կարող է սահմանվել 290-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որոշումների բողոքարկման միջնորդավորված կարգ և ներկայացվել մինչև դատական պաշտպանության դիմելը՝ օրենսգրքով նախատեսված արտադատական պաշտպանության միջոցն սպառելու պահանջ:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից պարզ է դառնում, որ անձն իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքն իրացնելուց առաջ պարտավոր է սպառել իրավունքների պաշտպանության արտադատական միջոցը՝ **դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում:** Օրենսդիրը, դատախազի կողմից շահագրգիռ անձի բողոքի մերժումը որպես նախապայման սահմանելով, նպաստ է հետապնդել, որպեսզի հնարավորություն ստեղծվի իրացնելու մինչդասական վարույթի նկատմամբ դատական հսկողությունը:

Միևնույն ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը, հիմք ընդունելով Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, արձանագրում է, որ եթե մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը պարզում է, որ **բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել քրեադատական օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջները, մասնավորապես՝ դատախազական միջամտություն հայցելու պահանջը («և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»)**, ապա առանց անդրադառնալու բողոքի հիմքերին՝ պետք է մերժի այն:

Այսպիսով, մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր շլիներու դեմ բողոքները, **եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից:**

Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԳՈ-844 որոշմամբ,

անդրադառնալով մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության կառուցակարգին, նշել է. «Յեւթննուսուրբ, նախաքննության մարմինների, պաշտոնասար անձանց, դասախազի որոշումները և գործողությունները դասարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,

- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դասախազի կողմից:

(...):»:

Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0018/11/17 դատական գործով 20.03.2018 թվականին կայացրած նախադեպային որոշմամբ արժանացրել է այն իրավական դիրքորոշումը, որ դասախազական հսկողության գործիքակազմի սպառումը նախապայման է մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրելու համար: Որպես իրավական պաշտպանության միջոց՝ դրա շրջանակներում ստուգվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) օրինականությունը, որի արդյունքում դասախազը կա՛մ արձանագրում է վիճարկվող որոշման (գործողության) իրավաչափության փաստը, կա՛մ հերքում այն: Այսինքն՝ դասախազական հսկողության կառուցակարգի սպառման արդյունքում կայացվող որոշումը հիմնվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) վրա:

Սույն վարույթի նյութերի համաձայն՝ 24.06.2020 թվականին Մեղադրյալ Վրժրուն Սլյանի պաշտպանի կողմից Դատարան է ներկայացվել բողոք՝ Տավուշի մարզային բննչական վարչության ավագ բննիչ Յ. Վարդանյանի կողմից 21.06.2020 թվականին կայացված որոշման վերաբերյալ, որի հիմքում դրվել է Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի կարգավորումները, Դատարանին խնդրելով բննիչի որոշումը «վերացնել, պարտավորեցնել վարույթ իրականացնող մարմնին վերացնել Ա.Սլյանի իրավունքների խախտումը, գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի, որպես խախտման միջոց կիրառել գրավը և որպես գրավ ընդունել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը»:

Դատարանը 03.07.2020 թվականին, ղեկավարվելով Օրենսգրքի 290-րդ հոդվածով, որոշել է. «Բողոքը ճանաչել հիմնավորված: Պարտավորեցնել պարտավորեցնել վարույթ իրականացնող մարմնին վերացնել թիվ 36100819 քրեական գործով մեղադրյալ Վրժրուն Սլյանի նկատմամբ ընդհանուր խախտման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին 21.06.2020թ. որոշմամբ Վրժրուն Սլյանի իրավունքների խախտումը»:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատարանը միջնորդությունը բննարկել և որոշում է կայացրել առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ բննիչի 21.06.2020թ. որոշումը չի բողոքարկվել դասախազական հսկողության կարգով, որից հետո միայն Օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով մեղադրյալի ենթադրաբար խախտված իրավունքների վերականգնումը Դատարանի համար կարող էր բննարկելի դառնալ դատական վերահսկողություն շրջանակներում:

Բարձրագույն դատական խորհուրդը, հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում է, որ Դատարանի կողմից 03.07.2020 թվականին կայացված

«Խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը թնկության առնելու մասին» որոշում կայացնելու հնարավորությունն օրենսդիրը Դատարանին որևէ նորմատիվ իրավական ակտով չի վերապահել:

Մինչդեռ, Դատավորը կայացրել է «Խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը թնկության առնելու մասին» որոշում՝ հիմքում դնելով Օրենսգրքի 290-րդ հոդվածը, այն դեպքում, երբ նշված հոդվածում խոսքը գնում է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությանը դիմելու այն դեպքին, երբ այդ իրավունքն իրացնելուց առաջ անձը սպառել է իրավունքների պաշտպանության արտադատական միջոցը՝ դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, իսկ սույն դեպքում Դատարանը, միջնորդության թնկարկման արդյունքում կայացված որոշման հիմքում դնելով Օրենսգրքի 290-րդ հոդվածը, չի պարզել, թե արդյոք սվյալ դեպքում մինչև Դատարան պաշտպանի կողմից միջնորդություն ներկայացնելը սպառվել է արտադատական կարգով բողոքարկման բոլոր հնարավորությունները, ինչից հետո և հնարավոր կլինեին միջնորդության թնկարկումը դատարանում:

Ուստի, Բարձրագույն դատական խորհուրդը շեշտում է, որ «Խափանման միջոց կալանավորումը վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ բողոքը թնկության առնելու մասին» որոշում կայացնելով, Դատարանը դուրս է եկել Օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից: Դատավարական նորմերի վերը նշված պահանջների խախտումը պարզելուց բացի, Բարձրագույն դատական խորհուրդը նաև անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական և փաստական հիմնավորումներին, որոնք Դատարանը դրել է դատավարական օրենքի խախտմամբ կայացված իր որոշման հիմքում:

Մասնավորապես Դատարանն իր Որոշմամբ արձանագրելով, որ թնկիչի Պ2020թ. հունիսի 21-ի որոշմամբ խախտվել է մեղադրյալ Վրժրուն Սլյանի ֆիզիկական ազատության, արդար դատաթնկության հիմնարար իրավունքները», նշել է, որ ՊԴատարանի այս հեժևությունը բխում է գործի փաստական հանգամանքներից, մասնավորապես նկատելով, որ գործով առկա են երեք մեղադրյալներ, որոնցից մեկը զսնվում է հեժևախուզման մեջ, մյուսը, ով հանդիսացել է կատարող, զսնվում է ազատության մեջ, իսկ սույն մեղադրյալը, որն ի սկզբանե մասնակիորեն սվել է խոստովանական ցուցմունքներ, պաշտան ներկայացել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձին և որևէ փորձ չի կատարել գործի թնկությանը խոչընդոժելու ուղղությամբ, անհիմն զսնվում է արգելանքի տակ»:

Դատարանի նշված պատճառաբանության առթիվ, Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում վկայակոչել գործով չվիճարկված և այդ թվում Դատավորի կողմից մինչև 2020թ. հունիսի 3-ի խնդրո առարկա Որոշումը նույն գործով կայացված որոշումների հիմքում դրված փաստերը: Մասնավորապես՝

ա) գործով հաստատված փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Մեղադրյալը նախկինում խախտել է Ստորագրություն չհեժևալու մասին» ընժրված խափանման միջոցի պայմանները, որից հետո Դատավորի կողմից բավարարվել է Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընժրելու միջնորդությունը, Մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հեժևախուզում, վերջինս հայժնաբերվել է, այնուհեժև

Դասարան է ներկայացվել միջնորդություն կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ, որն էլ Դատավորի կողմից բավարարվել է: Այս սեսյեսից անհասկանալի է Դատավորի՝ Որոշման հիմքում ընկած այն հիմնավորումը, որ Մեղադրյալը Սպառժան ներկայացել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձին և որևէ փորձ չի կատարել գործի բնույթյանը խոչընդոտելու ուղղությամբ».

բ) Դատավորի կողմից որպես Մեղադրյալի՝ արգելանքի սակ անհիմն զսնվելու փաստարկ, ներկայացվում է այն փաստը, որ գործով մյուս երեք (իրականում՝ չորս, սես՝ գ/թ 4, 7-րդ պարբ.) մեղադրյալները զսնվում են ազատության մեջ: Այս առթիվ պետք է նշել, սակայն, որ Դատավորի կողմից նշված այս անձանցից մեկը, ով զսնվում էր հետախուզման մեջ, գրավով ազատ էր արձակվել նույն Դատավորի որոշմամբ: Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ անթույլատրելի է, որպեսզի Դատավորը որպես գործով Մեղադրյալի արգելանքի սակ զսնվելու անհիմն լինելու փաստի հիմնավորում ներկայացնի գործով մեկ այլ մեղադրյալի, առավել ևս՝ նույն Դատավորի որոշման արդյունքում ազատության մեջ զսնվելու փաստը:

գ) Դատավորի կողմից որպես Մեղադրյալի՝ արգելանքի սակ անհիմն զսնվելու փաստարկ, ներկայացվում է նաև այն փաստը, որ մեղադրյալն ի սկզբանե մասնակիորեն սվել է խոստովանական ցուցմունքներ: Չնայած, որ այս հանգամանքը նույնպես Մեղադրյալի արգելանքի սակ զսնվելու անհիմն լինելու փաստի հիմնավորում ինքնին չի հանդիսանում, այնուամենայնիվ, նշված հանգամանքը վերաբերելի համարելու դեպքում, Դատարանը չէր կարող անստեղծ այն փաստը, որ հետազայում նույն Մեղադրյալը նույն գործով մեկ այլ մեղադրյալի հետ կատարված առերես հարցաքննության ընթացքում հրաժարվել է իր ցուցմունքներից ամբողջապես. թե՛ իր մասով, թե՛ նշված մեղադրյալի հանցակցության մասով (սես՝ գ/թ 6, 1-ին պարբ.): Դատական ակտի պատճառաբանվածության սեսյեսից Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ Դատավորի ընտրած պատճառաբանությունն առ այն, որ Մեղադրյալի արգելանքի սակ զսնվելու անհիմն լինելը հիմնավորվում է այդ թվում՝ Մեղադրյալի «մասնակիորեն սրված» խոստովանական ցուցմունքով, ողջամիտ դիտորդի համար անհասկանալի է թողնում այն, թե ինչու նույն Մեղադրյալի կողմից՝ այդ ցուցմունքներից ամբողջությամբ հրաժարվելը Դատարանի կողմից չի համարվել առնվազն վերաբերելի հանգամանք կամ ինչու մասնակի խոստովանական ցուցմունք սալը որպես վերաբերելի դիտելու պայմաններում, Դատարանը չի դիտարկել նաև այդ հանգամանքի արժանահավաս լինելը՝ մեղադրյալի՝ ամբողջության մեջ վերցրած՝ Որոշման կայացմանը նախորդած և հետազայում ակնկալվող դատավարական վարքագիծը զնահատելու սեսանկյունից: Բացի այդ, գործով մյուս երեք մեղադրյալների ազատության մեջ զսնվելու փաստը Դատավորի կողմից որպես Մեղադրյալի ազատության մեջ հայտնվելու փաստարկ վկայակոչելը անհիմն է նաև այն պատճառով, որ նրանցից առնվազն մեկը զսնվել է հետախուզման մեջ, այսինքն՝ նրա ազատության մեջ զսնվելը եղել է ոչ իրավաչափ.

դ) Կարևոր է հիշատակել նաև այն փաստը, որ Դատավորի կողմից փորձ է արվել անհետևանք թողնել սվյալ Մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, ապա՝ այն վերահաստատելու մասին իր իսկ կայացրած որոշումները:

Ելնելով վերոգրյալից՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատավորի կողմից թույլ տրված դատավարական

իրավունքի նորմի խախտումը հանգեցրել է նաև Ռաջասանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետով նախատեսված դատավորի վարձագծի կանոնի խախտման:

Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է նաև, որ դատավարական իրավունքի նորմերի և դատավորի վարձագծի կանոնի խախտումները թույլ են տրվել կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորը, ի պաշտոնե և մասնագիտության առումով, Տիրապետելով ՀՀ օրենսդրությանը, իմանալով իր պարտականությունները, պարտավոր էր հասկանալ և գիտակցել իր գործողությունների ոչ իրավաչափ բնույթը:

Միաժամանակ, Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է նաև, որ կարգապահական պատասխանատվության հարցի բնույթյան պահին Դատավորը չի ունեցել կարգապահական տույժ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Ռաջասանի Հանրապետության դատական օրենսգիրքի սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վրդարադատության նախարարի միջնորդությունը՝ Տավուշի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Տավուշի մարզի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռաֆիկ Մելքոնյանին հայտարարել խիստ նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲՎՐԶՐՎԳՈՒՅՆ ԴՎՏՎԿՎՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՎԳՎՅԻ

ՊՍԵՏՈՆՎԿՎՏՎՐ

ՎՆԴԱՄԵՆՆԻՆ՝

Գ. ԶՅՎԵԳԻՐՅԱՆ

Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ

Դ. ԽՎՉՎՏՈՒՐՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ս. ՄԻՔՅԵԼՅԱՆ

Վ. ՄԽԹՎՐՅԱՆ

Վ. ՔՈՉՎՐՅԱՆ

Հասուկ կարծիք
(որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ)

